ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՍԻՄԵՈՆ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ ԱԹՈՌԱԿԱԼՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԹԻՆՈՅԱՆ Դ. Ֆ.

Կիլիկիո կաթողիկոսությունը, XVII դ. երկրորդ կեսին կորցրած լինելով իր համահայկական նշանակությունը և գտնվելով օսմանյան տիրապետության տակ, այնուամենայնիվ, շարունակում էր մնալ հայ հոգևոր ու աշխարհիկ կյանքի կարևորագույն կենտրոններից մեկը[1]: Դրա հետ մեկտեղ XIII-XIV դդ. արդեն Մեծ Հայքի հոգեվոր և աշխարհիկ վերնախավի շրջանում խմորվում էր կաթողիկոսական աթոռը էջմիածին տեղափոխելու գաղափարը, որն ի վերջո իրականացավ 1441 թ.: Կիլիկիո աթոռակալներից ոմանք ամեն կերպ փորձում էին եթե ոչ վերականգնել իրենց գերակա դիրքը, ապա գեթ հավասար իրավունքներ ունենալ էջմիածնի հետ: Ընդ որում, այդ հարաբերությունները հաճախ ընդունում էին թշնամական բնույթ: Այդ առումով ուշագրավ է Սիմեոն II Սեբաստացու աթոռակալումը: Մինաս Քացախ Սսեցու (1621-1632 թթ.) մահից հետո Կիլիկիո կաթողիկոսական աթոռին բազմեց Սիմեոն II Սեբաստացին (1633- 1648 թթ.)՝ XVII դ. Կիլիկիո հոգևոր-եկեղեցական նշանավոր գործիչներից մեկը: Սիմեոնի նախորդ Մինաս կաթողիկոսը վախճանվել էր Երզնկայում, ուր գնացել էր իր ուսուցիչ Մինաս Երզնկացու մահվան կապակցությամբ պատարագ մատուցելու: Սակայն, ըստ Բ. Կյուլեսերյանի, Սիմեոնը կաթողիկոս օծվեց միայն 1633 թ. դեկտեմբերի 8-ին[2]: Բացի այդ, նոր կաթողիկոսի ընտրությունը անցնցում տեղի չունեցավ: Ըստ Գրիգոր Դարանաղցու՝ կաթողիկոսի մահից հետո «…կիլիկեցիքն՝ քահանայք եւ տօլվաթաւորքն կոչեցին ի Սիս զԿեսարացի Գրիգորն՝ մեծ եւ աւագ վարդապետ համարելով»[3]: Չնայած ժողովի բավական պատկառելի ներկայացուցչական կազմին, այնուամենայնիվ, կաթողիկոսի ընտրության հարցում վճռական էր հենց Գրիգորի դիքորոշումը: Պետք է նշել, որ Գրիգոր Կեսարացու հեղինակությունը և ազդեցությունը մանավանդ Կիլիկիայի հայ աշխարհիկ ու հոգևոր վերնախավի վրա բավական մեծ էին: Հենց նա էր 1602 թ. հաշտեցրել Կիլիկիո երկու կաթողիկոսներին՝ Հովհաննես Անթեպցուն և

---

[1] *Գ. Հարությունյանը իրավամբ նշում է. «Անկախ նրանից, որ հոգևոր նվիրապետը շարունակում էր ներկայանալ հայոց կաթողիկոսի տիտղոսով և աշխատում էր պահպանել նախկին վիճակը (1292 թ. հետո - Թ. Դ.), կաթողիկոսությունը դանդաղորեն պարփակվում էր կիլիկյան պետականության համակարգում..» (Պատմության հարցեր, Տարեգիրք, 2009, N 1, էջ 53):*

[2] *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), գրեց Բաբգէն Ա. աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ (այսուհետև՝ Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ), Անթիլիաս, 1939, սյուն 305:*

[3] *Ժամանակագրութիւն* **Գրիգորի վարդապետի Կամախեցւոյ** *կամ* **Դարանաղեցւոյ,** *Երուսաղեմ, 1915 թ., էջ 337 (այսուհետև՝ Դարանաղցի). տե՛ս նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ, Ե., 1978, էջ 528:*

Պետրոս Կարկառեցուն: Կեսարացին սկզբնապես առաջադրեց Ներսես Սեբաստացի վարդապետի թեկնածությունը, որը ժողովի մասնակիցները ընդունեցին առանց որևէ առարկության: Թե որքան մեծ էր Կեսարացու ազդեցությունը, վկայում է նրա՝ Ներսեսի կաթողիկոսության դիմաց առաջ քաշած պահանջը, այն է՝ նոր կաթողիկոսը պետք է թուղթ ստորագրեր, ըստ որի, առանց իր համաձայնության և հրամանի չձեռնարկել ոչինչ: Եվ այդ առումով այս կաթողիկոսական ընտրությունը առանձնանում է մնացյալներից: Կաթողիկոսի ընտրությունը կատարվում էր մեկ մարդու կողմից, և դա նույնիսկ իրավական ձևակերպում պետք է ստանար: Այս պահանջի կատարմամբ Ներսեսի կաթողիկոսությունը փաստացիորեն կվերածվեր ձևական կառավարման: Ուստի և Ներսեսը հրաժարվեց կաթողիկոսական աթոռից՝ նշելով. «…յորժամ բան եւ գործ կատարելու լինայ, որ արժանն է, ես զինքդ յուր գտանիցեմ. եւ այս կերպիւ հակառակութեան բան էարկ ի միջի, որ խափանեաց»[4]: Այս ձախողումից հետո Կեսարացու թեկնածությունը կանգ է առնում Սիմեոն Սեբաստացու վրա, որը համաձայնում է Կեսարացու պայմաններին, այն է՝ կաթողիկոսական գործերը վարել վերջինիս ենթակայության ներքո: Դարանաղցին այդ կապակցությամբ նշում է. «Եւ կոչեաց զՍիմէոն եպիսկոպոսն, որ ի մանկութենէ սպասաւոր եւ ժամասաց էր երկուց կաթողիկոսացն, բայց չէր նման Ներսեսին ամենայն իրօք, նա ետուր ձեռագիր որպէս կամեցաւ»[5]: Այստեղ Դարանաղցին, Սիմեոնին համեմատելով Ներսես Սեբաստացու հետ, նրան ներկայացնում է ընդգծված հեգնական ոճով: Չնայած դրան, հաջորդ իսկ պարբերության մեջ Դարանաղցին գրում է. «Եւ յորժամ ինքն (Կեսարա-ցին - Թ. Դ.) եկաւ յՀստամբոլ պատրիարգ եղեւ Գրիգորն, զՍիմէոնն հետ եբեր, որ բնաւ չէր հաւանիր իւր արարմանցն, եւ յետոյ հրաժարեալ գնաց ի Սիս, եւ ոչ հարցանել եւ կամ հրաման խնդրել յիւրմէն, ոչ ձեռագիր եւ ոչ երդումն, զինչ որ կամի՝ այնպէս կու առնէ եւ բնաւ ի մարդոյ կարգի չհամարելով, մինչեւ այսր ժամանակի»[6]: Ըստ ամենայնի, Կեսարացին, ստանձնելով Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի պաշտոնը և Սիմեոնին իր հետ տանելով, նպատակ ուներ իր անմիջական վերահսկողության տակ պահել Կիկիկիո կաթողիկոսին, քանզի իր համար վերջինիս ստորագրած պարտավորագրերը հնազանդության ապահովության հուսալի երաշխիք չէին: Ցավոք, չկա որևէ այլ սկզբնաղբյուր այդ փաստերը հանգամանալից համադրելու համար, սակայն հավաստի է, որ արդեն 1634 թ. Սիմեոնը արդեն Սսում էր: Այս ամենն հաշվի առնելով՝ կարծում ենք, որ ականավոր հետազոտող Բ. Կյուլեսերյանը սխալվել է Սիմեոնի գահակալման թվագրման հարցում, քանզի քիչ հավանական է, որ վերջինս, 1633 թ. օծվելով, գնար Կոստանդնուպոլիս, վերադառնար և 1634-ով թվագրվող պատասխան նամակ հղեր Էջմիածնի Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսին (1633-1655 թթ.): Առավել հավանա-

---

[4] **Դարանաղցի,** էջ 337:

[5] Նույն տեղում, էջ 337-338:

[6] Նույն տեղում, էջ 338:

կան է, որ կաթողիկոսի ընտրությունը տեղի ունեցած լիներ 1632 թ. վերջ - 1633 թ. սկիզբն ընկած ժամանակահատվածում, իսկ 1633 թ. դեկտեմբերի 8-ի օծումը տեղի է ունեցել Սիմեոնի՝ Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո: Այսպես, նույն Ներսես Սեբաստացու թողած հիշատակարանում, որը թվագրված է 1633 թ. մարտի 23-ով, արդեն հիշատակվում է Սիմեոնը՝ որպես կաթողիկոս[7]: Ցավոք, աղբյուրները լռում են նաև Սիմեոնի՝ Կոստանդնուպոլսից վերադառնալու հանգամանքների մասին: Պարզ է մի բան, որ ընդհուպ մինչև Գրիգոր Կեսարացու մահը՝ 1636 թ.[8], Սիմեոնը միանգամայն ինքնուրույն գործունեություն էր իրականացնում: Ավելին, վերադառնալուց հետո Սիմեոնը իրեն է մերձեցնում կաթողիկոսական աթոռի նախկին հավակնորդին՝ Ներսես Սեբաստացուն: Դրա մասին վկայությունն այն է, որ 1638 թ., Երուսաղեմ այցելության առիթով Սիմեոնի շքախմբում հիշատակվում է նաև Ներսես վարդապետը[9], որն, ամենայն հավանականությամբ, նույն Սեբաստիայի եպիսկոպոս Ներսես վարդապետն էր: Սիմեոնի՝ ավելի քան մեկ և կես տասնամյակ տևած աթոռակալման թերևս ամենահիշարժան իրադարձությունը Փիլիպպոս Աղբակեցու հետ ունեցած նամակագրությունն է, առավել ստույգ՝ նրան ուղղված նշանավոր «Թուղթը»: Այս նույն շրջանում՝ 1633 թ., Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս է օծվում Էջմիածնի թերևս ամենաեռանդուն ու նշանավոր աթոռակալ-ներից մեկը՝ Փիլիպպոս Աղբակեցին: Նրա ողջ գործունեությունը միտված էր Էջմիածնի գերակայությունը հայաբնակ ողջ տարածքներում ամրակայելուն, որի նպատակով էլ տեղի ունեցավ նաև «Սուրբ աջի» վերադարձը Էջմիածին: Նրա այս ուղեգծի մեջ էր մտնում ինչպես Աղթամարի, Աղվանից, այնպես էլ Կիլիկիո կաթո-ղիկոսությունների և Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունների կողմից Էջմիածնի Մայր Աթոռի գերակայության ճանաչումը, որը հիմնականում Փիլիպպոսին հաջողվեց[10]: Այդ գործունեության շրջանակում պետք է դիտարկել նաև նրա՝ Կիլիկիո կաթողիկոսության հետ սկսած նամակագրական կապը: Ընդ որում, այդ նամակագրությունը երկու հոգևոր հաստատությունների միաժամանակյա, գրեթե երկդարյա պատմության առաջին՝ իրոք թշնամական հարաբերությունների վկայությունն է: Այն իր վիրավորական ու թշնամական բնույթով աննախադեպ էր կողմերի փոխհարաբերություններում: Նամակագրության հիմնական նյութը, ինչպես նշեցինք, առնչվում է երկու կաթողիկոսությունների իրավասությունների սահմանման կնճռոտ խնդրին և արժեքավոր է նրանով, որ XVI- XVII դդ. երկու աթոռների միջև առկա իրավասությունների սահմանմանն առնչվող՝ մեզ հասած փաստացիորեն միակ նամակագրական աղբյուրն է: «Կ'ենթադրենք,- գրում է Բ.

---

[7] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ, Ե., 1978, էջ 502:*

[8] *Գրիգոր Դարանաղցին Կեսարացու մահվան երկու թվական է հիշատակում՝ 1635 և 1636 թթ. (տե՛ս* **Դարանաղցի**, *էջ 365, 434). առավել հավանական ենք համարում 1636 թ.:*

[9] **Սաւալանեանց Տիգրան Հ. Թ.**, *Պատմութիւն Երուսաղէմի (այսուհետև՝ Պատմութիւն Երուսաղէմի), հ. Առաջին, Երուսաղեմ, 1931, էջ 587:*

[10] *Տե՛ս* **Թորոսյան Հ.**, *Էջմիածնի վանական տնտեսությունը XV-XVIII դարերում, Ե., 2007, էջ 54-57:*

Կյուլեսերյանը,- որ բազում թղթակցութիւններ եղած ըլլան երկու աթոռներու միջեւ այսպիսի խնդիրներու շուրջ, բայց անոնք կորսուած են, և միայն Սիմէոն Բ-ի այս թուղթն է, որ հասած է մեզի...»[11]: Նման ենթադրություն է անում նաև Հուսիկ եպիսկոպոսը. «Կիլիկիայի կաթողիկոսները իրանց թեմի շրջանից դուրս վիճակների գործերին խառնվելով՝ մեծամեծ խռովութիւնների պատճառ էին դառնում»[12]: Մեզ հասել է միայն Սիմեոնի պատասխան նամակը Փիլիպպոս Աղբակեցուն: Դատելով Սիմեոնի պատասխանի վիրավորական ոճից՝ կարելի է ենթադրել, որ Փիլիպպոսի նամակը լի է եղել վերամբարձ և մեղադրական արտահայտություններով: Նամակի շարադրման առիթ էր դարձել Անկյուրիո թեմի Թորոս եպիսկոպոսի ձեռնադրումը Սիմեոնի կողմից, որը ստացել էր լայն հնչեղություն: Նամակը թվագրվում է 1634-ով[13], որից պարզ է դառնում, որ աթոռակալման սկզբից ևեթ Փիլիպպոսը ձեռնամուխ է եղել Էջմիածնի գերագահության ամրակայմանը: Սիմեոնի պատասխան նամակը սկսվում է Փիլիպպոսի առաջարկած սիրո գաղափարի ժխտմամբ. «Այո, ճշմարտութեամբ ասես զայս. բայց զի՞նչ է կարգ սիրոյ. այսինքն երկու են, նախ խընդ-րելով զփոխարէնն զսիրելն, իբրեւ զդժոխս նախանձ. այո՛ ճշմարտութեամբ ասես եւ այս պակաս է, զի որ խնդրէ, պակաս առնէ զխնդրելին: Իսկ երկրորդ սէրն առանց խնդրելոյ սիրեն եւ այս գերադրական է, զի Աստուծոյ նմանի»[14]: Չժխտելով Կյուլեսերյանի ենթադրությունը, որ նամակը կրել է մեղադրական և վիրավորական բնույթ, փաստենք, որ Սիմեոնի պատասխանի սկզբից պարզ է դառնում, որ Էջմիածնի աթոռը, այդուամենայնիվ, սիրո և միաբանության կոչ է արել: Դատելով հետագա տողերից՝ սիրո և համերաշխության կոչերով Փիլիպպոսը նկատի է ունեցել իր հովվապետական սերը Կիլիկիո կաթողիկոսության թեմերի ազգաբնակչության հանդեպ՝ որպես գերագույն հոգևոր առաջնորդ: Թե որքան մեծ է եղել թշնամանքը, առավել ակնառու է հաջորդ պարբերությունից, որտեղ Կիլիկիո աթոռակալը չի խորշում անգամ անձնական բնույթի վիրավորանքներից. «Եւ մտերիմ սէրն այն է որ գործով խնամք կը տանի եւ մտօք կը սիրէ... Բայց տեսանեմ ի սոցանէ ի քեզ եւ ոչ զմին. զի հեռի են այս ամենայն ի քէն. զի միայն լեզու տոչորես ի սիրոյ եւ ոսկերք քո վասն առաւել նախանձու մշտակէզ առնեն զքեզ... Ահա բանիւ քո զքեզ ստես, ոչ ի քեզ սիրոյ հուր կայ եւ ոչ տոչորումն եւ ոչ մշտակէզ ոսկերացն այրումն... վասն զի

---

[11] Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 313:

[12] **Յուսիկ եպիսկոպոս,** Եկեղեցի Հայաստանեայց, Հայրապետական աթոռի մասին (Արարատ, 1904, համար Ա, յունուար, էջ 24.):

[13] Մ. Օրմանյանը Փիլիպպոսի նամակը թվագրում է 1636-ով (տե՛ս Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը (այսուհետև՝ Ազգապատում), գրեց **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան,** Մ. Էջմիածին 2001, հ. Բ, սյուն 2846:

[14] **Յուսիկ եպիսկոպոս,** Եկեղեցի Հայաստանեայց, Հայրապետական աթոռի մասին (այսուհետև՝ Յուսիկ եպիսկոպոս), Արարատ, 1904, համար Դ, յունուար, էջ 378:

սէրն ի սրտէ զունողն. եւ զի քո սէրդ ոչ ի սրտէ է եւ ոչ հոգեւոր եւ ոչ մարմնաւոր»[15]: Այդուհետև, Սիմեոնը չընդունելով «սիրո և համերաշխության» առաջարկը, հայտնում է, որ այստեղ Փիլիպպոսի ո՛չ անունն են լսել և ո՛չ էլ նրա գործերից են տեղյակ: Շարունակելով մեղադրանքները Էջմիածնի հանդեպ՝ Սիմեոնը անցնում է առավել առարկայական մեղադրանքների. «Դուք ընդէ՞ր զԱղուանից տունն յափշտակեցիք, զոր ի ձեր թուղթն գրեալ էիք, թէ ինքն զլուխ աթոռ է ի Սուրբ Լուսաւորչէն կարգեալ: Նոյնպէս եւ զԱղթամարայն ընդ ձեր իշխանութեամբ նուաճեցիք»[16]: Դատելով այս պատասխանից՝ կարելի է կարծել, որ Սիմեոնը, բացի Փիլիպպոսին մեղադրանքներ ներկայացնելուց, լուրջ մտավախություններ է ունեցել, որ Փիլիպպոսը նմանատիպ նկրտումներ ուներ նաև Կիլիկիո աթոռի հանդեպ:

Յավոք, պարզ չէ՝ Ամենայն հայոց կաթողիկոսը երկու աթոռների միության ուղիղ առաջարկ արե՞լ է, թե՞ ոչ, սակայն կարելի է կարծել, որ Սիմեոնը նամակը և դրա ենթադրյալ վերամբարձ տոնը դիտարկել է հենց այդ տեսանկյունից: Այդուհետև, Սիմեոնը փորձում է հիմնավորել Կիլիկիո աթոռի համահայկական իրավունքները. «…Առաջին կաթուղիկոսութիւնն ի Սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ այտի էառ սկիզբն, եւ նստան մինչեւ ցՅովսէփ տասներկու կաթողիկոսներ ի Վաղարշապատ, եւ անտի փոխեցան ի Դվին… եւ ելեալ Աջը ի Կիլիկիա, որ այժմ ասի Սիս, առ թագաւորն հայոց երկրորդ Հեթումն: Եւ շինուեցան կաթուղիկէ տաճարքն Էջմիածին եւ Ս. Սոփի եւ Ս. Աստուածածին անուանեալք ի խորհուրդ այդ եկեղեցեացդ (այսինքն՝ Էջմիածնի եկեղեցիների նմանությամբ - Թ. Դ.)»: Փաստորեն, Սիմեոնը, նշելով, որ Էջմիածինը որպես հոգևոր կենտրոն կարճ ժամանակ է գործել, միևնույն ժամանակ ընդունում է վաղարշապատյան սրբատեղիների կարևորությունը՝ հավելելով, սակայն, դրանց կրկնօրինակների առկայությունը Սսում: Դրա հետ մեկտեղ, մեղադրանք է ներկայացվում Փիլիպպոսին, որ վերջինս իրեն՝ Սիմեոնին, կոչել է «անվանեալ կաթողիկոս»: Շարունակելով միտքը՝ Կիլիկիո աթոռակալը առավել ծանր մեղադրանք է ներկայացնում «արևելցիներին». «…Ի թուին հայոց ՉՃՂ(1441), անհնազանդ եղեալ ձեր արեւելեան կողմիդ ի սուրբ Լուսաւորչի Աթոռոյս եւ ձեռնադրեցին ըստ կամաց իւրեանց զԿիրակոս կաթուղիկոս Խորվիրապեցին դապալայով (կաշառք - Թ. Դ.)…»[17]: Այսպիսով, Լուսավորչի աթոռը, համաձայն Սիմեոնի, կարող էր տեղակայված լինել բացառապես Սսում, իսկ Էջմիածնի կաթողիկոսությունը հիմնված էր կաշառքի վրա և իրավապես ու բարոյապես որևէ համահայկական հավակնություն չէր կարող ունենալ: Նշենք, որ համահայկական կաթողիկոսական աթոռը Էջմիածին տեղափոխելու քաղաքական, տնտեսական ու մշակութային հիմքերը լուսաբանված են, և այս հոդվածում դրա քննարկման անհրաժեշտությունը չկա: Երկու կաթողիկոսությունների միջև գոյություն ունեցող

[15] Նույն տեղում, էջ 379:
[16] Նույն տեղում, էջ 381:
[17] Նույն տեղում, համար Ե., էջ 478-479:

թերևս ամենակնճռոտ հարցերից մեկը կողմերի ֆինանսներին վերաբերող՝ թեմերի պատկանելության և դրանցում ձեռնադրություններ անելու իրավունքին առնչվող խնդիրն էր: Դատելով պատասխանից՝ Կիլիկիո կաթողիկոսների կողմից էջ-միածնական թեմերում ձեռնադրություններ կատարելու մեղադրանքը հնչեցրել էր Փիլիպպոսը: Սիմեոնը, թվարկելով իր նախորդ կաթողիկոսների՝ Խաչատուրի, Պետրոսի և Ազարիայի կատարած ձեռնադրությունները, հարցնում է. «..Ապա եւ մեք ընդէ՞ր ոչ ունիմք իշխանութիւն ձեռնադրելոյ ըստ վերոգրելոցս»[18]: Ապա Սիմեոնը մատնանշում է Փիլիպպոսի և նրա նախորդների կատարած ձեռնադրությունները Կիլիկիո կաթողիկոսարանի թեմերում: Մ. Օրմանյանը, չնայած իր ընդգծված «էջմիածնական» դիրքին, նշում է, որ «Երկուքին (երկու կաթողիկոսությունների - Թ. Դ.) ալ սահմանները ոչ սկիզբէն, եւ ոչ յետոյ որոշ գծուած չէին, եւ քաղաքական տիրապետութեանց համեմատ կը փոխուէին իրաւասութեանց վիճակները»: Այսինքն, XVII դ. առաջին կեսին երկու կաթողիկոսարանների թեմերն ու իրավասությունների սահմանը դեռևս ամբողջությամբ հստակեցված չէին: Անշուշտ, կային թեմեր, որոնց պատկանելությունը կասկած չէր հարուցում, բայց դրա հետ մեկտեղ շատ ավելին էին «վիճահարույց թեմերը»: Շարունակելով միտքը՝ Օրմանյանը իրավամբ նշում է. «..Մայր աթոռի անկարգ անկանոն կացութիւնը, մանաւանդ վերջին ժամանակներու մէջ, համարձակութիւն տուեր էին միւս աթոռներուն ուզածնուն պէս գործել եւ ուզած կողմերնուն համար եպիսկոպոսներ ձեռնադրել»[19]: Նման պայմաններում, բնական է, որ «մրցակից» հովվապետը ձգտելու էր լայնացնել իր իրավասությունների շրջանակը, սակայն այդ գործելակերպը հավասարապես կարող էր կիրառվել նաև էջմիածնի աթոռի կողմից: Փիլիպպոսը, դատելով պատասխան նամակից, բա-նադրանքի է ենթարկել Կիլիկիո կաթողիկոսի կողմից օծված հոգևորականներին, ինչն էլ ավելի է բարկացրել Սիմեոնին. վերջինիս պատասխանը առավել քան խոսուն է. «Ասացեալ ես թէ զինչ օգուտ եղեւ քո օրհնելն եւ մեր բանադրելն. իսկ զսոսա բանադրես, թէ Սոոյ էք օրհնեալ, մինչ Սոոյ ձեռնադրողքն ամենեքեան բանադրեալք են, ուրեմն այս վերոգրեալքն ամենեքեանքն բանադրեալք կու լինին ըստ քո. իսկ թէ այդպես է, վախճանեալքն ի հող, եւ կենդանիքն ի մէջ աշխարհի բանադրէ, որ սիրտդ պաղի»[20]:

Այդուհետև Սիմեոնը անդրադառնում է Թորոս եպիսկոպոսի ձեռնադրման խնդրին՝ նշելով, որ Գրիգոր Կեսարացու հետ Կոստանդնուպոլիս մեկնելու ճա-նապարհին, երբ կանգ են առնում Անկյուրայում, այդժամ մահացած Ղուկաս եպիսկոպոսի փոխարեն, անսալով տեղի հայության խնդրանքին, Թորոսին կարգում են Անկյուրայի վանահայր: Կոստանդնուպոլսից վերադառնալուց արդեն Սիմեոնը կրկին «անսալով» տեղի հայության և նույնիսկ այլազգիների խնդրանքին,

[18] Նույն տեղում, համար Է-Ը, էջ 714:

[19] Ազգապատում, սյուն 2844:

[20] **Յուսիկ եպիսկոպոս,** համար Է-Ը, էջ 715:

եպիսկոպոս է օծում Թորոսին: Դա հարուցում է ոչ միայն Փիլիպպոսի, այլ նաև Սիմեոնի՝ արդեն նախկին հովանավոր Գրիգոր Կեսարացու բարկությունը: Սիմեոնը իր պատասխանում որևէ կերպ չի թաքցնում, որ Անկյուրան թեև համարում է Էջմիածնի նվիրապետական թեմ, ուստի պատահական չէ, որ այս դեպքի հետ կապված հասարակական մեծ հնչեղությունից հետո նա Թորոսին բերում է Սիս՝ առաջարկելով Սսին ենթակա թեմերից որևիցե մեկի եպիսկոպոսությունը: Ամենայն հավանականությամբ, Սիմեոնը սկզբում իրապես նպատակ է ունեցել «յուրացնել» այդ թեմը, սակայն հանդիպելով բուռն հակազդեցության (նաև Գրիգոր Կեսարացու կողմից, որի հետ հարաբերություններն արդեն Կոստանդնուպոլսից վերադառնալուց հետո սրվել էին)՝ հրաժարվում է այդ մտքից: Մ. Օրմանյանը, հենվելով այն փաստի վրա, որ Թորոսը, օծված լինելով Կիլիկիո աթոռակալի կողմից, ի վերջո պաշտոնավարման է տեղափոխվում Սիս, ենթադրում է, որ դա տեղի է ունեցել Փիլիպպոսի նամակի շարադրումից հետո, այլապես այդ հարցը Էջմիածնի աթոռակալը չէր բարձրաձայնի[21]: Սակայն, կարծում ենք, որ եթե անգամ Փիլիպպոսը տեղեկացված լիներ Թորոսի՝ Սիս տեղափոխվելու մասին, ապա նա «մրցակից» կաթողիկոսին պախարակելու այդ հարմար առիթը բաց չէր թողնի: Թե որչափ խիստ է եղել Փիլիպպոսի նամակի ոճը, զգացվում է նաև պատասխան նամակում առաջ քաշված մեղադրանքներից. «…մեր օրհնելոյն պիտի դատաստան, ապա ձեր արարեալ բանից դատաստան չպիտի՞: Վասն Համազասպ եպիսկոպոսին, ո՞րպիսի զանազան տանջանոք սպանել տուիք. եւ Ճանճի եպիսկոպոսն մարդակերաց, որոյ ականջն հատանել տուիք, եւ զՍերկեւլեցի աբեղային զծածուկ անդամն կտրել տուիք եւ զԳառնեցի աբեղայն հաւատոցն ուրացուցիք, զԶաքէոս աբեղայն ֆռանկ առնել տուիք. նոյնպէս զՍահակ կաթուղիկոսն եւ զՊողոս վարդապետն տաճկցնել տուիք… եւ ի Լեհու երկիրն անհաղորդ, անմասն, անթաղում ելան այնքան քրիստոնեայք… Այս բանիցս դատաստան չիկայ միայն մեզ կա՞յ»[22]: Անշուշտ, այս մեղադրանքների զգալի մասը անհիմն կերպով են վերագրված Փիլիպպոսին, սակայն դրանց բարձրաձայնումը ևս խոսում է արդեն թշնամական փոխհարաբերությունների մասին: Նամակի վերջին հատվածում Սիմեոնը անուղղակի կերպով ակնարկում է իր՝ օսմանյան տերության կողմից հովանավորված լինելու մասին. «Ապա մեր երկրին կարող չէս ինչ առնէլ, հալովդ կացիր, զի այս երկիրս օսմանցւոց երկիրն է, սոցա դատաստանն ուղիղ է. Աստուած զսոցա թագաւորութիւնը հաստատ թող պահեսցէ եւ Սուլթան Մուրատին մէկ օրն Ռ (հազար - Թ. Դ.) արասցէ, եւ զիւրն թագաւորութիւնն օրհնեսցէ…»[23]: Այս տողերը խոսում են այն մասին, թե որքան էին խորացել հակասությունները երկու հոգևոր հաստատությունների միջև, որ կողմերից մեկը նույնիսկ ակնարկում էր օտարի օժանդակության մասին: Նամակը Սիմեոնը եզրափակում է կրկին Կիլիկիո

---

[21] *Ազգապատում, այուն 2851:*

[22] **Յուսիկ եպիսկոպոս,** *համար Է-Ը, էջ 716:*

[23] *Նույն տեղում, էջ 722:*

աթոռի օրինականության վերաբերյալ դրույթով. «Իսկ Վաղարշապատ նստողներուն նահապետն ու նախահայրն է ապստամբ Կիրակոս Վիրապեցին: Վասն զի ոչ թէ կաթողիկոսը, որ Ս. Լուսաւորչէն ի վեր ունէր հայրապետական յաջորդութիւնը, Սիս թողլով իր աթոռը, ելաւ Վաղարշապատ գնաց, այլ վարդապետներէն Կիրակոս անուն մեկը, որ ապստամբութիւն կը խորհէր, գլուխ վերցուց»[24]: Յավոք, ոչինչ հայտնի չէ Փիլիպպոսի արձագանքի մասին. Մ. Օրմանյանը, այս առնչությամբ վարկած է առաջ քաշում, որ նույնիսկ նամակը Էջմիածին չի հասել: Մյուս ենթադրությամբ, Մ. Օրմանյանը, հղում անելով Փիլիպպոսի խոհեմությանը, ենթադրում է, որ վերջինս, իրադրությունը էլ ավելի չսրելու համար ուղղակի չի պատասխանում նամակին[25]: Իր հերթին, Կյուլեսերյանը գտնում է, որ այս պատասխանը ստանալուց հետո Փիլիպպոսը «դատաստան» անելու իրնդրանքով դիմեց Գրիգոր պարոնտեր եպիսկոպոսին[26]: Սակայն պատասխան նամակում պարզ ակնարկվում է, որ Փիլիպպոսը, այդ խնդրանքով դիմել է մինչև Սիմեոնին նամակ ուղարկելը: Աղբյուրների բացակայության պատճառով դժվար է հաստատապես պնդել այդ տեսակետներից որևէ մեկը: Սակայն փաստ է, որ Փիլիպպոսը, խիստ նամակ ուղարկելով հանդերձ, հաշտության ձեռք է մեկնում՝ առաջարկելով Գրիգոր պատրիարքի թեկնածությունը՝ որպես հաշտարար դատավոր: Ի վերջո, ինչպես ցույց տվեց ժամանակը, կողմերը 1638 թ. Գրիգոր պարոնտեր Երուսաղեմի պատրիարքի միջնորդությամբ (որին ժամանակին դիմել էր Փիլիպպոսը) Երուսաղեմում գումարված ժողովում եկան համաձայնության: «Սիմէոն կաթողիկոս,- գրում է Սավանալյանցը,- իր ձեռագրով կը խոստանայ իր վիճակին չպատկանող եպիսկոպոսներ ու քահանաներ չձեռնադրել այլեւս. նոյնպէս, կ'ըսէ՝ Էջմիածինի կաթողիկոսն ալ իր վիճակէն դուրս ոեւէ մեկը պէտք չէ ձեռնադրէ»[27]: Էջմիածնական կողմը այս ժողովին ներկայացված չէր, և այդ պարտավորագիրն ուղարկվեց Էջմիածին, որտեղ էլ այն ընդունվեց Փիլիպպոսի կողմից: Չնայած որ հակառակությունը կողմերի միջև շարունակվեց, և համաձայնագիրը կարճ ժամանակ անց խախտվեց, այդուամենայնիվ, դրա կայացումը մեծ նշանակություն ունեցավ երկու աթոռների փոխհարաբերություններում: Թեև Սիմեոնը աթոռակալեց մինչև 1648 թ., այսուամենայնիվ, նրա և Էջմիածնի փոխհարաբերությունների մասին այլևս ոչինչ հայտնի չէ: Իսկ այս փաստաթուղթը մնաց հայոց պատմության մեջ՝ որպես երկու նվիրապետական աթոռների ժամանակի փոխհարաբերությունները բնորոշող դրվագ: Երկու աթոռների փոխհարաբերությունների հաջորդ դրվագը, որը լուծում տվեց շատ կնճռոտ հարցերի, կապված է արդեն Կիլիկիո հաջորդ աթոռակալ Ներսես Սեբաստացու հետ:

---

[24] *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 336:*

[25] *Ազգապատում, սյուն 2853:*

[26] *Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, սյուն 307:*

[27] *Պատմութիւն Երուսաղէմի, էջ 588:*

ОТНОШЕНИЯ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА С ЭЧМИАДЗИНСКИМ КАТОЛИКОСАТОМ ВСЕХ АРМЯН В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ СИМЭОНА СЕБАСТАЦИ

ТИНОЯН Д. Ф.

Резюме

В письме, адресованном католикосу всех армян Филиппосу, Симэон II – католикос Киликийский всеми способами пытается обосновать приоритет Киликийского католикосата. Этот документ является уникальным в плане освещения истории Киликийского армянского католикосата.